ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքսուորլդ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/39-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ5 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	Տեքսուորլդ ՍՊԸ	Տեքսուորլդ ՍՊԸ	Տեքսուորլդ ՍՊԸ	3 18231910/2 Բաճկոն և տաբատ Բաճկոն և տաբատ՝ ամենօրյա, շտաբային կանացի (վետրովկա ԱԱԾ, կանացի) Համազգեստը բաղկացած է բաճկոնից և տաբատից, վրան անմիջապես կարված զույգ կրծքանշաններից և զույգ թևքանշաններից: Արտադրվում է մուգ կանաչավուն երանգի «Ռիպստոպ» տեսակի 235 գրամ մակերեսային խտությամբ, 44% բուրդ, 54% պոլիէսթեր և 2% լայկրա բաղադրությամբ գործվածքից (ըստ նմուշի): Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Բաճկոնը կազմված է լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից:

				Լանջափեշերը միացվում են կենտրոնական շղթայով, ունի դիմացի և հետին կոկետկաներ, լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղահայաց կենտրոնական ծալվածքներով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են պաշտպանական գույնի պլաստմասե գլխիկավոր կոճակներով: Կողային գրպանները շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնը ունի 6,5-7,0սմ լայնքով գոտի, որը երկտակ կտորով է: Գոտու կողքերից էլաստիկ ժապավեններով ձգվածքներ են (չորսկարանոց շիպլետ), դիմային մասի կենտրոնում կոճկվում է երկու հատ գլխիկավոր կոճակներով: Օձիքը ծալովի է, օձիքի միացման կարում մշակվում է կախիչ: Թևերը ներկարված են 6,5-7,0սմ լայնքով մանժետներով (մանժետները երկտակ կտորով): Յուրաքանչյուր թևը կոճկվում է երկուական, մուգ կանաչավուն գույնի պլաստմասե գլխիկավոր կոճակներով: Ուսադիրների ամրացման համար յուրաքանչյուր ուսին 2 փակ զիգզագակարով օղակներ և 2 հատ 3.4-3.6սմ լայնքով կամրջակներ են կարված: Աստառը՝ մետաքսյա (90գ/մ2) մուգ կանաչավուն գույնի գործվածքից: Ձախ և աջ լանջափեշերին ներսամասից երեսացու կտորի վրա մշակվում են ներքին ծոցագրպաններ, որոնք կոճկվում են մեկական պլաստմասե կոճակներով և օղակներով: Ձախ և աջ թևքերի վրա մշակվում են սեպաձև տեսքով 7.0x9.0 սմ չափսի ասեղնագործ կամ մեռու գործվացքով (merrow) ՀՀ զինանշանը՝ ձախ թևքին և ԱԱԾ խորհրդանշանը՝ վահանը և դրոշը համապատասխանաբար եռագույն գունավորմներով (ըստ նմուշների): Կրծքամասի

				գրպանների կափույրների վրա՝ գրպանների լայնությանը համաչափ, մշակվում են 2.5×12.5 սմ չափսի կրծքանշաններ՝ ՛՛ՀՀ ԱԱԾ՛՛ գրվածքը՝ ձախ, և ՛՛ԴՆՊ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ՛՛ կամ ՛՛ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՁՈՐՔԵՐ՛՛ աջ կափույրների վերին մասերում: Տարբերանշանների գրվածքների ձևերը և տեսակները կտրամադրվի Պատվիրատույի կողմից չափս հասակային տվյալների տրամադրմանը զուգահեռ: Տաբատը կանացի կազմվածքին համապատասխան ձևվածքով է, կազմված է առաջամասից, հետնամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով է, գրպանների միջուկը՝ երեսացու կտորից է: Աջ հետնամասում կտրված գրպան՝ ուղղանկյուն կափույրով, որը կոճկվում է մեկ պլաստմասե 15մմ կոճակով և օղակով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին 6 հատ կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար: Կողային կարերում անցկացվում է 1.5-1.8 մմ լայնության 2481/2581 ԻԱ արտիկուլի կամ համարժեք կապույտ կամ կանաչ գույնի մահուդից երիզներ: Առաջամասում, մինչև ծնկների ստորին հատված մշակվում է մետաքսյա մուգ կանաչավուն գույնի գործվածքից աստառ: Պիտակավորումը: Բաճկոնի ձախ ծոցագրպանի ներսից և տաբատի գոտու ներսից ձախ մասին պետք է կարված լինի պիտակներ: Պիտակի վրա նշված՝ տեսականու չափսը, խնամքի վերաբերյալ գրառումներ և սիմվոլներ, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը և մրցույթի համարը: Բաճկոնի կենտրոնական շղթայի շնիկի վրա պետք է կախված լինի

				չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10-12 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 հատ: Արկղերը պիտակավորված կամ տպագրված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և/կամ արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման տարեթիվը, աճուրդի կոդը :

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/39-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ5 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
3				